

Analytical Bulletin of Armenian and Regional Studies
ISSN: 1829-4502
e-ISSN: 2953-8254
Journal homepage: https://analytical-bulletin.cccs.am/index.php/ab/index

CENTER FOR CULTURE AND CIVILIZATION STUDIES FOUNDATION

Tatevik Mkrtchyan
"Mirjam Kunkler and Devin Stewart (Eds.), Female Religious Authority in Shi'i Islam: Past and Present, Edinburgh, Edinburgh University Press, 2021, XIV, 402 pp."

To cite this article: Tatevik Mkrtchyan. "Mirjam Kunkler and Devin Stewart (Eds.), Female Religious Authority in Shi'i Islam: Past and Present, Edinburgh, Edinburgh University Press, 2021, XIV, 402 pp." *Analytical Bulletin of Armenian and Regional Studies (CCCS)* 19 (2024): 93-102 DOI: 10.56673/18294502-tmm2024.19.2

To link to this article: DOI: 10.56673/18294502-tmm2024.19.2

Published online:

03 October

Submit your article to this journal

DOI 0.56673/18294502-tmm2024.19.2

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Mirjam Kunkler and Devin Stewart (Eds.), Female Religious Authority in Shi'i Islam: Past and Present, Edinburgh, Edinburgh University Press, 2021, XIV, 402 pp.

Միրյամ Քյունքլեր և Դևին Ստյուարտ (խմբ.), Կնոջ կրոնական հեղինակությունը շիա իսլամում. անցյալը և ներկան, Էդինբուրգ, Էդինբուրգի համալսարանի հրատարակչություն, 2021, 402 էջ

DOI: 10.56673/18294502-tmm2024.19.2
Ներկայացվել է՝ 8 հունիսի 2024
Ընդունվել է՝ 1 հուլիսի 2024

«Կնոջ կրոնական հեղինակությունը շիա իսլամում. Անցյալը և ներկան» գիրքը խմբագրական ժողովածու է, որն առաջին անգամ նման ժամանակագրական ընդգրկունությամբ ներկայացնում է շիա իսլամում կնոջ կրոնական իշխանության և հեղինակության դերը: Այն քննարկում է կնոջ դերը սկսած Մուհամմադ մարգարեի դուստր Ֆատիմայից (մահ. 632թ.) և իր կանանցից մեկից՝ Ումմ Սալամայից (մահ. 680-683թ.) մինչև մեր օրերի կին կրոնական հեղինակություններ՝ Ամինա բինթ ալ-Հուդա (1937-1980) և Նուսրաթ Ամին (1886/95-1983): Ժողովածուի խմբագիրներն են Շվեդիայի առաջատար ուսումնասիրությունների քոլեջի ավագ գիտաշխատող Միրյամ Քյունքլերը[1] և Էմորի համալսարանի արաբագիտության և իսլամագիտության պրոֆեսոր Դևին

[1] Միրյամ Քյունքլերը մի շարք գրքերի հեղինակ է Indonesia, Islam and Democracy (Columbia University Press, 2013), A Secular Age Beyond the West (Cambridge University Press, 2018) and The Rule of Law in the Islamic Republic of Iran: Power, Institutions, and Prospects for Reform (Cambridge University Press, 2021):

Ստյուարտը:[2] Նրանք այս ժողովածուի միջոցով ներկայացնում են իսլամում կանանց կրոնական իշխանության և հեղինակության ոչ շատ հայտնի պատմությունները: Այս ժողովածուն իսլամական և մասնավորապես շիայական ավանդույթում կնոջ դերի ուսումնասիրության ոլորտում կարևոր ներդրում է:

Ժողովածուն կազմված է ներածությունից, մեկ ընդհանրացնող և տասնմեկ՝ առաջին անգամ հրապարակված գլուխներից: Ժողովածուն իր ամբողջության մեջ, մի կողմից, ձևավորում և ամրապնդում է շիա իսլամում կանանց իշխանության և հեղինակության մասին պատկերացումները տարածության և ժամանակի կտրվածքով, մյուս կողմից այն վեր է հանում կրոնական, աստվածաբանական, սոցիալական, տնտեսական և/կամ քաղաքական իրադրությունների, պայմանների և զարգացումների համեմատական ենթատեքստերը:

Ժողովածուի ներածությունը կոչված է համատեքստավորել այս աշխատանքը ընդհանուր դաշտում: Այն նախ ցույց է տալիս դաշտում եղած աշխատանքները, ապա մատնանշում, թե ինչ բաց է լրացնելու այս ժողովածուն: Օրինակ, հեղինակները նշում են երկու կարևոր աշխատությունների մասին,[3] որոնք ներկայացնում են սուննի իսլամում կանանց դերի և իշխանության ու հեղինակության հետ կապված ժամանակակից համատեքստերը: Միևնույն ժամանակ նրանք նշում են, որ դրանցից ոչ մեկը չի փորձում առաջարկել վարկածներ, թե ինչու են որոշ աշխարհագրական վայրերում և ժամանակակից համատեքստերում կին հոգևոր

[2] Դևին Ստյուարտը ակադեմիական բազմաթիվ հրապարակումների հեղինակ է այնպիսի հեղինակավոր ամսագրերում, ինչպիսիք են Islamic Law and Society, Bulletin of the School of Oriental, African Studies, Journal of Qur'anic Studies և այլն:

[3] Masooda Bano and Hilary Kalmbach, Women, Leadership and Mosques: Changes in Contemporary Islamic Authority, Leiden: Brill, 2012, Muslim women and the challenge of authority,' eds. Juliane Hammer and Riem Spielhaus, in The Muslim World 103.3 (2013), 287–431.

իշխանությունները ավելի շատ հանդիպում, քան այլ վայրերում։ Գրքի խմբագիրները նշում են, որ «միայն այն ժամանակ, երբ մենք կկարողանանք ավելի լավ պատկերացնել կանանց կրոնական իշխանության/հեղինակության հարցը ժամանակի և տարածության մեջ և հատկապես արական սեռի հետ համեմատության համատեքստում, մենք կկարողանանք ձևակերպել վարկածներ, թե որ պայմաններն ու զարգացումներն են «աստվածաբանական», «կրոնաիրավական», «սոցիալ-տնտեսական», «քաղաքական», որ ուժեղացրել, խթանել և կամ հակառակը՝ զսպել և խեղդել են կնոջ իշխանության դրսևորման երևույթները» (էջ XIII)։

Ներածությանը հաջորդում է Միրյամ Քյունքլերի հեղինակությամբ իսլամական պատմության մեջ կնոջ կրոնական հեղինակության հարցի շուրջ ընդհանրական մի գլուխ՝ վերնագրված «Իսլամում կնոջ կրոնական իշխանության մասին մոռացված պատմություններ» (Forgotten Histories of Female Religious Authority in Islam)։ Այս թեմայով առկա հետազոտական շրջանակներն ընդհանրացնող գլխին հաջորդում են տասնմեկ գլուխներ, որոնք անդրադառնում են տասներկուիմամական շիայական իսլամի համատեքստում կանանց կրոնական իշխանության և հեղինակության հատուկ ասպեկտներին։ Հոդվածների աղբյուրագիտական հենքը նույնպես շատ բազմազան է և կարևոր։ Դրանք են հադիսների կորպուսը, կենսագրական աշխատանքները, անթոլոգիաները, իրավական ժողովածուները, պոլեմիկ տեքստերը, ժամանակակից կրոնական ուսումնական հաստատությունների ձեռնարկները և աշխատանքները, նկարներ, ինչպես նաև՝ մասնակցային դիտարկումները։ Ուսումնասիրությունների կին կերպարները Մուհամմադ մարգարեի ընտանիքի անդամներն են, իմամների ընտանիքների հետ տարբեր առնչություններ ունեցող կանայք, իմամների

ժամանակակիցները, ժամանակակից կին կրոնագետները, հոգևոր կին առաջնորդները և այլն։

Թեմատիկ առումով երրորդ և չորրորդ գլուխներն անդրադառնում են Մուհամմադ մարգարեի ժամանակաշրջանի, Ահլ ալ-Բեյթի (Մուհամմադ մարգարեի ընտանիքի անդամներ) երկու կանանց՝ Մուհամմադի կանանցից Ումմ Սալամային և իր դստերը՝ Ֆատիմային։ Յասմին Ամինը «Ումմ Սալամա, կնոջ հեղինակություն, որը օրինականացնում է հեղինակությունը» (Umm Salamah: A Female Authority Legitimating the Authorities) գլխում քննարկում է, թե ինչ դերակատարություն է ունեցել Ումմ Սալաման ինչպես Ալի իբն Աբի Տալիբի՝ մուսուլմանական համայնքի առաջնորդ լինելու, այնպես էլ՝ նրա իրավահաջորդների իրավունքի ձևավորման հարցում։ Նրա դեպքը մեկն է այն բազմաթիվ դեպքերից, երբ կանայք, որոնք առնչություն ունեն Ահլ ալ-Բեյթի հետ, կարևոր դեր են խաղում *նասս*-ի՝ աստվածային նախախնամությամբ իրավահաջորդի բացահայտ նշանակման հարցում, ինչն էլ երաշխավորում է *իմամաթի*՝ իմամների իշխանության օրինականության պատմական ձևակերպումը։ Նա մեծ դերակատարում է ունեցել Ալի իբն Աբի Տալիբին որպես Մուհամմադ մարգարեի օրինական իրավաժառանգորդ ճանաչելու և բացահայտ կերպով *նասս-ի*՝ իրավահաջորդ լինելու երաշխավորության հարցերում։

Ժողովածուի՝ «Մարգարեի ժառանգորդը. Ֆատիման՝ որպես իր հոր ժառանգության հետնորդ» (Heiress to the Prophet: Fatima as Inheritor of Her Father's Legacy) գլխում Ալիսա Գաբբայը քննարկում է Ֆատիմայի այն *խուտբան*՝ ճառը, որը բողոքի մանիֆեստ է իր և իր սերունդների նկատմամբ կատարված պատմական անարդարության դեմ։ Այս հոդվածում քննարկվում է, թե ինչպես, երբ խալիֆ Աբու Բաքրը (632–634) որոշեց Ֆատիմային իրավունք չտալ ժառանգել Ֆադակի օազիսը, որը իր հոր՝ Մուհամմադ

մարգարեի սեփականությունն էր, Ֆատիման ընդդիմացավ այդ որոշմանը: Տեքստը, ամենայն հավանականությամբ, ապոկրիֆ է, բայցևայնպես այն վերագրվում է ութերորդ դարի պատմիչ Աբու Միխնաֆին (մահ. 773–774): Այն նաև պահպանվել է Իբն Աբի Տահիր Տայֆուրի (մահ. 893թ.) «Կանանց ճարտասանությունները» (Balāghāt al-nisā’) աշխատության մեջ: Նա Ֆատիմային ներկայացնում է ոչ միայն որպես Ահլ ալ-Բեյթի իրավունքների հավատարիմ պաշտպան, այլև՝ որպես իսլամական սուրբ գրությունների և օրենքի խորաթափանց մեկնաբան: Այս տեքստի հիմքով է նաև, որ Ֆատիման համարվում է շիայական ավանդույթում կնոջ կրոնական իշխանության մոդել:

Լիյաքաթ Թաքիմի հեղինակությամբ «Շիա իմամների ժամանակաշրջանում կանանց հոգևոր իշխանությունը» (Female Authority in the Times of the Shi'a Imams) գլուխը կենտրոնանում է իմամների՝ կին ուղեկիցների հարցի շուրջ: Ճակատագրի հեգնանքով իմամների ուղեկիցները, որոնց վերաբերյալ կիրառվում է rijāl (բառացիորեն «տղամարդիկ») տերմինը, իսկ կենսագրական ժողովածուներն էլ հիմնականում անվանվում էին Քիթաբ ալ-Ռիջալ, սակայն ներառում էին նաև հարգված կին կրոնական գործիչների կենսագրական տվյալները, որոնք գրի էին առնվել այդ ժողովածուների հեղինակների կողմից տասներորդ և տասնմեկերորդ դարերում: Այս կին ուղեկիցները կարևոր դեր են կատարում մասնավորապես որպես պատմական իրադարձությունների ականատեսներ, որոնք իմամության գաղափարի զարգացման ակունքներում էին: Թաքիմը ցույց է տալիս, որ այդ ուղեկցող կանայք իմամների իրավահաջորդության ձևակերպման փուլում նրանց մտադրությունների լուռ ականատեսներն են, նրանց գաղտնի հարստությունների պահապանները, իմամների գիտելիքների փոխանցողները և

իսլամի կանոնիկ ավանդույթի կրողներն ու իրավական ճիշտ պրակտիկայի մարմնավորումները:

Ռոբերտ Գլիվն իր «Նա չպետք է բարձրացնի իր ձայնը, երբ տղամարդկանց մեջ է. Իմամիական փաստարկները կին դատավորների դեմ (և կողմ) » (She should not raise her voice when amongst men: Imāmī arguments against (and for) women judges) վերնագրված գլխում քննարկում է տասներկուական շիաների իրավական ավանդույթում եղած պատմական բանավեճերը կանանց՝ դատավոր լինելու հարցի շուրջ: Չնայած իմամիական շատ հեղինակությունների կողմից այս հարցի շուրջ համաձայնության, որ կանայք կարող են հասնել լիիրավ կրոնագետի կոչման և նույնիսկ հայտնել աստվածաբանական, իրավագիտական եզրակացություններ, մեծամասնության կարծիքով կինը նույնիսկ իրավագետի աստիճանակարգ ունենալու պարագայում չի կարող դատավոր աշխատել դատարանում: Գլիվը մանրամասն ներկայացնում է այս կարծիքի շուրջ շիայական փաստարկները և եզրակացնում է, որ շիայական դիրքորոշումը այս հարցում շատ քիչ է տարբերվում սուննիական մոտեցումներից և դիրքորոշումներից: Չնայած շիայական մոտեցումները համահունչ են սուննիական շրջանակներում առկա կնոջ թերի մտածողություն և ինտելեկտ ունենալու փաստարկներին, շիաները նման դիրքորոշումները ավելի դժկամությամբ և ավելի քիչ են բարձրաձայնում: Դրա պատճառներից է, թերևս, շիայական ավանդույթում հեղինակավոր կանանց առկայությունը, պատմականորեն կանանց՝ կրոնական և աստվածաբանական, կրոնագիտական հեղինակությունների վառ օրինակները, ինչպիսին կարող է համարվել Ֆատիմայի քարոզը և նրա՝ շիայական ավանդույթում ունեցած դերակատարությունը:

Դևին Ջ. Ստյուարտը «Հուսնիյայի բանավեճերը Հարուն ալ-Ռաշիդի արքունիքում. Միջկոնֆեսիոնալ պոլեմիկան և կանանց

կրոնական հեղինակությունը» (Husniyyah Debate at the Court of Harun al-Rashid: Sectarian Polemics and Female Religious Authority) գլխում վերլուծում է Հուսնիյայի բանավեճը՝ մի տեքստ, որը կազմվել է Սեֆյան Իրանում տասնվեցերորդ դարում, բայց վերագրվում է տասներկուերորդ դարի գիտնական Աբու ալ-Ֆութուհ ալ-Ռազիին, որն առավել հայտնի է իր պարսկերենով գրված Ղուրանի մեկնաբանությամբ՝ «Դրախտի զեփյուռը և հոգու շունչը» (Rawḍ al-jinān wa-rawḥ al-janān): Տեքստը «Հազար ու մեկ գիշեր ժողովածուից» վերցված նախատիպային պատմություն է ստրկուհիներից մեկի՝ Հուսնիյայի և սուննի կրոնագետների միջև եղած բանավեճի մասին: Հուսնիյան ստրկուհի է եղել մեկ այլ անձի մոտ, սակայն ծառայել է նաև Ջաֆար ալ-Սադիկի տանը և Հարուն ալ-Ռաշիդի օրոք լավ կրթություն է ստացել իմամների ուսուցչապետության ներքո: Նրա հնչեղ հաղթանակը սուննի կրոնագետների հետ բանավեճում ցույց է տալիս, որ նույնիսկ ստրուկ կինը կարող էր աստվածաբան փորձագետի և իրավաբանի բարձր աստիճանի հասնել՝ դառնալով շիայական ուսմունքի՝ սուննիական հակառակորդների նկատմամբ գերազանցությունը ցույց տալու նմանատիպ պատմությունների նախադեպ:

Մայքլ Բարրիի «Հերաթցի Մուհամմադի Լեյլին՝ որպես դրախտի թագուհի» (Layli as Queen of Heaven by Muhammadi of Herat) վերնագրված գլխում քննարկման թեման է այս ժողովածուի շապիկի վրայի նկարը, որի վրա պատկերված է արքայադուստր Լեյլին: Նկարը տասնվեցերորդ դարի սեֆյան վարպետ-գեղանկարիչ հերաթցի Մուհամմադի վրձնին է պատկանում և նկարվել է, ամենայն հավանականությամբ, Իբրահիմ արքայազնի (1540-1577) համար: Այն կոչվում է «Նստած արքայադուստր» և հեղինակի կողմից ներկայացվում է որպես աստվածայինի դրսևորում, որը համահունչ է Իբն ալ-Արաբիի՝ աստծո էության (dhāt) կանացի բաղադրիչի հայեցակարգին: Բարրին համարում է, որ սա իսլամական արվեստի

հազվագյուտ օրինակներից է, որտեղ կինը պատկերված է որպես կրոնական հեղինակություն ունեցող գործիչ:

Յուսուֆ Ունալը «Արքայադուստրերը, հովանավորչությունը և գիտելիքի ստեղծումը Սեֆյան Իրանում» (Princesses, Patronage, and the Production of Knowledge in Safavid Iran) հոդվածում քննարկում է այն հարցը, թե ինչպես էին Սեֆյան արքայատոհմի արքայադուստրերը, ստանալով «իմամների հարսնացուներ» տիտղոսը, իմամներին հատուկ աստվածային նախախնամությամբ գործելու ինքնուրույնությամբ օժտված կարգավիճակ ստանում:

Ժողովածուի վերջին գլուխները քննարկում են 20–րդ և 21-րդ դարերում Իրանում կանանց դերի հետ կապված հարցեր: Միրյամ Քյունքլերի և Ռոժա Ֆազելիի «Երկու մուջթահիդաների կյանքը. 20-րդ դարի Իրանում կանանց կրոնական հեղինակությունը» (The Lives of Two Mujtahidahs: Female Religious Authority in 20th Century Iran) գլխում հեղինակները երկու նշանավոր կին մուջթահիդաների՝ Նուսրաթ Ամինի (1886–1983) և Զոհրե Սեֆաթիի (1948–) օրինակով քննարկում և համեմատում են տղամարդ մուջթահիդների և կին մուջթահիդաների դերակատարությունը և ազդեցությունը քսաներորդ դարի ընթացքում կրոնական կրթության փոփոխությունների վրա:

Ռաֆայելե Մաուրիելոն քննարկում է Սադդամ Հուսեյնի կողմից 1980 թվականին մահապատժի ենթարկված կրոնական առաջնորդ Մուհամմադ Բաքիր ալ-Սադրի և նրա քրոջ՝ Ամինա Բինթ ալ-Հուդայի ունեցած դերակատարությունը: Հոդվածում, որը վերնագրված է ««Առաքելության մյուս կեսը». Ամինա Բինթ ալ-Հուդան (ալ-Սադրը) որպես Մուհամմադ Բակիր ալ-Սադրի վաքի՞լ» (The “Other Half of the Mission”: Amina Bint al-Hudà (al-Sadr) as Wakil for Muhammad Baqir al-Sadr?), հեղինակը ցույց է տալիս, որ Ամինան, ընտրելով չամուսնանալու և կրթություն ստանալու ճանապարհը և իր եղբոր կողքին գործելով, դառնում է ոչ միայն 21-րդ դարի

Իրաքում սոցիալական շարժման կրոնական հեղինակավոր կին առաջնորդ, այլև իր եղբոր տեղակալ/փոխանորդ՝ *վաքիլ*:

Էդիթ Սանթոն իր «Խոսելով Զեյնաբի անունից. Շիա իսլամում կնոջ կրոնական հեղինակությունը Սիրիայում» (Speaking in the Name of Zaynab: Female Shi'i Religious Authority in Syria) հոդվածում ներկայացնում է Դամասկոսից 15 կմ հարավ գտնվող Սայյիդա Զեյնաբ սրբավայրում գտնվող կանանց ուսուցանման ժամանակակից սեմինարիայում կին ուսուցիչների շրջանում կատարված էթնոգրաֆիկ հետազոտության արդյունքները: Այս սեմինարիան բացվել է իրաքցի կրոնագետ Սեյյիդ Հասան Շիրազիի կողմից 1973 թվականին: Հետազոտության արդյունքները ցույց են տվել ուսուցիչների շրջանում եղած *ալիմաթի* (կրոնագետ կանայք) և *մուլլայաթի* (սգո ծիսակարգերը իրականացնող, մոլլաների՝ կրոնագետների ընտանիքի անդամներ) կիրառության շուրջ հետևյալ տարբերությունը. ալիմաթները իրավունք ունեն որպես կրոնագետներ հանդես գալ, իսկ մուլլայաթները՝ ոչ:

Ժողովածուի վերջին հոդվածը Մարիամ Ռութերի «Կանանց կրոնական սեմինարիաները Իրանում. Դիվերսիֆիկացված համակարգ՝ ի հեճուկս դրանց միասնականացման և ստանդարտացման պետական փորձերին» (Women's Religious Seminaries in Iran: A Diversified System Despite State Attempts at Unification and Standardization) վերնագրված գլուխն է: Այստեղ հեղինակը քննարկում է ժամանակակից Իրանում երկու սեմինարիաների՝ Շիրազի Ռայհանե ալ-Նաբիի և Էսթեհբանի ալ-Զահրայի ծրագրերը, դասապրոցեսները՝ մանրամասն ներկայացնելով կանանց կրոնական քառաստիճան կրթական համակարգը և դրան հասնելու ճանապարհները:

Ներառելով հարուստ ու խորը վերլուծական նյութ՝ գիրքը, այնուամենայնիվ, կարող էր շահել, եթե ներառեր նաև հետազոտության ավելի ընդարձակ աշխարհագրություն (օրինակ՝

Հնդկաստանից և Պակիստանից օրինակներ) ՝ հաշվի առնելով այդ երկրներում շիայական փոքրամասնությունների առկայությունը և նաև պատմական ներկայությունները և իրադարձությունները։

Բացի այդ, գիրքը, վերնագրված լինելով շիա իսլամում, այլ ոչ թե՝ իսնաաշարիայում կնոջ կրոնական հեղինակությունը, կարող էր ավելի համընդգրկուն լինել շիայական այլ ճյուղերի մասին գլուխների առկայությամբ։ Հաշվի առնելով որոշ ուղղությունների կողմից կանանց նկատմամբ ավելի հավասար իրավունքների սկզբունքային մոտեցումների առկայությունը՝ այն կարող էր ներառել իսմայիլականության, նիզարիականության, բոհրաների և այլ ուղություններին առնչվող օրինակներ։

Այուամենայնիվ, անհերքելի է, որ գիրքը նոր հնարավորություն և խթան է հանդիսանում ժամանակակից գիտական շրջանակներում իսլամում կնոջ կրոնական իշխանության և հեղինակության շուրջ բանավեճերի և քննարկումների համար։ Ընդհանրապես, այս ժողովածուն հետաքրքրական է և օգտակար ոչ միայն գենդերային, շիայականության մեջ կրոնական հեղինակության և իշխանության հարցերի, այլև առավել լայն շրջանակի հարցերի քննարկման տեսանկյունից։ Ինչպես նշում են խմբագիրները, «մենք կարող ենք ժամանակի և տարածության մեջ կնոջ կրոնական հեղինակության հարցերը քննարկել շիա իսլամում տղամարդկանց հեղինակության հետ համեմատության մեջ, ինչն էլ հնարավորություն կստեղծի վարկածներ առաջ քաշել, հետագա քննարկումներ և նոր բացահայտումներ անել իսլամում կնոջ ունեցած դերի և հեղինակության շուրջ» (էջ XIII)։

Տաթևիկ Մկրտչյան
Երևանի պետական համալսարան
Արաբագիտության ամբիոն, դասախոս
tmkrtchyan@ysu.am